Արձանագրություն N 12

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կարիքների համար համակարգչային սարքավորումների գնման «ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«15» « հունվարի » 2017թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Նելսոն Զուլոյան
Հանձնաժողովի անդամներ	Ալբերտ Մուրադյան, Մանյա Մխիթարյան
Հանձնաժողովի քարտուղար	Աննա Հարությունյան

1. **ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01 ծածկագրով մրցույթի հայտերի բացումը, օրը և ժամը**

(Ն.Զուլոյան)

1.1 «ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01» ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2017 թվականի դեկտեմբերի 26-ին, ժամը 11:00-ին:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և հասցեների հրապարակում**

(Ն.Զուլոյան)

2.1 Հայտեր ներկայացվել են հետևյալ մասնակիցների կողմից.

Մասնակիցների անվանումները	**Հասցե**
«Նորմա Պլյուս» ՍՊԸ	Ք.Երևան, Մաշտոցի 2, տարածք 60
«Յունիվերսալ Փրոջեքթ» ՍՊԸ և «Ֆայլ Բիրդ Դիստրիբյուշն» ՖԶԵ համատեղ գործունեություն	Ք.Երևան, Արին Բերդի 7 Միացյալ Արաբական Էմիրություններ, Դուբայ,RA08 VB07
«Այյունեթվորքս» ՍՊԸ	Ք.Երևան, Պուշկին 58/1, շին. 55
«Ռետրո ֆիլինգս» ՍՊԸ	Ք.Երևան, Անտառային Փ. 120 տ.
«Էլմարկետ» ՍՊԸ	Ք.Երևան, Աճառյան 33/4
«Ինկրիպտ» ՍՊԸ	Ք.Երևան, Խանջյան 31ա, բն.23
«Յունիքոմփ» ՓԲԸ	Ք.Երևան, Չարենցի փող., 37 շենք
«Լանս» ՍՊԸ	Ք.Երևան, Կոմիտաս 49

3. **Հայտերը էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ**

(Ն.Զուլոյան)

3.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

(Ն.Զուլոյան)

4.1 Հաշվի առնելով փաստաթղթերի լրացման հետ կապված ստորև նշվող խնդիրները, գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման նիստը կասեցվել էր և 2017թ-ի դեկտեմբերի 29-ին պարզաբանման հարցում էր ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն, որի ստացումից հետո հանձնաժողովի գործունեությունը վերսկսվել է հունվարի 11-ին:

Մասնավորապես. «Յունիվերսալ Փրոջեքթ» ՍՊԸ և «Ֆայր Բիրդ Դիստրիբյուշն» ՖԶԵ համատեղ գործունեության կողմից ներկայացված հայտում՝ Հավելված 3-ը, ներկայացվել էր սխալ ձևաչափով: «Յունիքոմփ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Հայտում՝ Հավելված 1-ում՝ որպես պատվիրատու նշվել է Առողջապահական ԾԻԳ ՊՀ-ն՝ ՀՀ Առողջապահության նախարարության փոխարեն, ինչպես նաև հրավերով պահանջվող տուժանքի մասին համաձայնության փոխարեն ներկայացվել է բանկային երաշխիք յուրաքանչյուր չափաբաժնի գծով: «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի համաձայն «Յունիվերսալ Փրոջեքթ» ՍՊԸ և «Ֆայր Բիրդ Դիստրիբյուշն» ՖԶԵ համատեղ գործունեությունը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու շտկված Հավելված 3-ը, իսկ «Յունիքոմփ» ՓԲԸ-ն՝ շտկված Հավելված 1-ը: Հավելվածները ներկայացվել են սահմանված ժամկետում:

«Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից տուժանքի մասին համաձայնությունը և վճարման պահանջագիրը ներկայացվել էին մեկ փաստաթղթի ձևով, և էլեկտրոնային ստորագրությունը դրվել էր միայն տուժանքի մասին համաձայնության էջի վրա, ինչպես նաև պահանջագրի վրա մասնակցի կողմից լրացվել էր ամսաթիվը: Գնահատող հանձնաժողովը հայտի ապահովման վավերությունը ճշտելու համար նամակով դիմել է կազմակերպությանը սպասարկող բանկին, որի կողմից փաստաթուղթը վավեր է որակվել, և հաստատվել է, որ վճարման պահանջագրով պահանջ ներկայացնելու դեպքում վճարումը կկատարվի սահմանված կարգով:

«Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ-ի կողմից տուժանքի մասին համաձայնության ձևաչափի վրա ամսաթիվ նշված չէր, սակայն փաստաթուղթը ստորագրված էր էլեկտրոնային ստորագրությամբ, և ստորագրման ամսաթիվը և ժամը հստակ տեսանելի էին:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև ստացված պարզաբանումները և շտկումները գնահատող հանձնաժողովը որոշեց, որ բոլոր մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը, համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված գների և մասնակիցների կողմից զբաղեցրած տեղերի վերաբերյալ

(Ն.Զուլոյան)

5.1 Մասնակիցների կողմից ներկայացված գների և մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին աղյուսակը կցվում է:

6. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների և պատասխանների մասին

(Ն.Զուլոյան)

6.1 Մրցույթի վերաբերյալ նոյեմբերի 17-ից դեկտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում ստացվել են 18 հարցումներ, որոնց սահմանված կարգով տրամադրվել էին

պարզաբանումներ: Պարզաբանումները armeps համակարգով ուղարկվել են մասնակիցներին, ինչպես նաև հրապարակվել են www.gnumner.am կայքի համապատասխան բաժնում:

7.Հանձնաժողովը որոշեց՝

(Ն.Զուլոյան)

7.1 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Յունիվերսալ Փրոջեքթ» ՍՊԸ և «Ֆայլ Բիրդ Դիստրիբյուշն» ՓՁԵ համատեղ գործունեության կարգով հայտ ներկայացրած մասնակցին, 2-րդ չափաբաժնով՝ «Էլմարկետ» ՍՊԸ-ին, 3-րդ չափաբաժնով՝ «Լանս» ՍՊԸ-ին, 4-րդ չափաբաժնով՝ «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին:

7.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին, որ հրավերով սահմանված կարգով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնեն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և առաջարկած ապրանքի ամբողջական նկարագիրը:

7.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել՝ «ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասին պահանջվող տեղեկատվությունը ստանալու նպատակով:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ն.Զուլոյան)

8.1 «ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացությունը և մասնակիցներից որակավորման հիմնավորման փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը՝ 11:00-ին ՀՀ առողջապահության նախարարության (հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3) 2-րդ հարկում՝ նիստերի դահլիճում:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Նելսոն Զուլոյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ալբերտ Մուրադյան

_____ Մանյա Մխիթարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Աննա Հարությունյան

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Մասնակիցների առաջարկած գները															
		Նորմա-Պլյուս ՍՊԸ		Յունիվերսալ Փրոջեքթ ՍՊԸ և Ֆայր Դիստրիբյուշն ՖԶԵ		Այյունեթվորքս ՍՊԸ		Ռետրո ֆիլինգս ՍՊԸ		Էլմարկետ ՍՊԸ		Ինկրիպտ ՍՊԸ		Յունիքոմփ		Լանս ՍՊԸ	
		գինը առանց ԱԱՀ	գինը ներառյալ ԱԱՀ	գինը առանց ԱԱՀ	գինը ներառյալ ԱԱՀ	գինը առանց ԱԱՀ	գինը ներառյալ ԱԱՀ	գինը առանց ԱԱՀ	գինը ներառյալ ԱԱՀ	գինը առանց ԱԱՀ	գինը ներառյալ ԱԱՀ	գինը առանց ԱԱՀ	գինը ներառյալ ԱԱՀ	գինը առանց ԱԱՀ	գինը ներառյալ ԱԱՀ	գինը առանց ԱԱՀ	գինը ներառյալ ԱԱՀ
1	Համակարգիչ			653,695,000	784,434,000	878,117,625	1,053,741,150					749,056,000	898,867,200	885,400,000	1,062,480,000	749,455,000	899,346,000
2	Էկրան									120,650,000	144,780,000	138,107,200	165,728,640	209,760,000	251,712,000		
3	Նոութբուք									162,750,000	195,300,000	149,626,400	179,551,680	168,280,000	201,936,000	149,411,500	179,293,800
4	Նույնականացման քարտ ընթերցող սարք	6,120,000	7,344,000					8,980,000	8,980,000	21,000,000	25,200,000						

1-ին տեղ	
2-րդ տեղ	
3-րդ տեղ	
4-րդ տեղ	
5-րդ տեղ	

-